ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈ ԳՀԱՊՁԲ-20-9/21-1

ք. Երևան 30 -ը հունվարի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսված փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հաստատված մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հաստատված:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հաստատված, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***41,615,530 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտների պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում

է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հ/Ա 0073177779

Հ/ա Ա.Բարսեղյան

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/21-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Գլյուկոզա 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	GLUC2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
2.	Ընդհանուր սպիտակուց 400թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	TP2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
3.	Ալբումին 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝4x100 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ALB2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
4.	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	BILT3, 400T, cobas c 111	Roche Diagnostics
5.	Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x50 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	BILD2, 100T, cobas c 111	Roche Diagnostics
6.	Միզանյութ 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	UREAL, 400T, cobas c 111	Roche Diagnostics
7.	Միզաթթու 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	UA2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
8.	Կրեատինին 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝400 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CREAJ2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
9.	Տրանսամինազա AUS 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ASTL, 400T, cobas c 111	Roche Diagnostics
10.	Տրանսամինազա ALS 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝4 x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ALTL, 400T, cobas c 111	Roche Diagnostics
11.	Ալֆա-Ամիլազա 200 թեսթ	լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝2 x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	AMYL2, 200T, cobas c 111	Roche Diagnostics
13.	Լակտատ-դեհիդրոգենազա 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x50 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	LDH, 100T cobas c 111	Roche Diagnostics
14.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար Ֆորմատ՝ 2x100 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CK 200Tests , cobas c111	Roche Diagnostics
15.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-MB 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x50 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CKMB, 100T, cobas c 111	Roche Diagnostics
16.	Խոլեսթերոլ 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 4x100 թեսթ կամ այլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CHOL2, 400T, cobas c 111	Roche Diagnostics
17.	Տրիգլիցերիդներ 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	TRIGL, 200T, cobas c 111	Roche Diagnostics
18.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ	HDLC4, 200T, cobas c 111	Roche Diagnostics
19.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ	LDLC3, 100T, cobas c 111	Roche Diagnostics
20.	Գլյուկոզիդացված հեմոգլոբին 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	A1C-3, 200T, cobas c 111	Roche Diagnostics
21.	Երկաթ 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ	IRON2, 100T, cobas c 111	Roche Diagnostics

23.	C -Ռեակտիվ սպիտակուց 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 1x200 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CRPLX, 200T, cobas c 111	Roche Diagnostics
24.	NaCl Diluent 9%	Լրակազմում 48 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար:Ֆորմատ՝ 4x12 մլ, 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	NaCl Diluent 9%, cobas c 111	Roche Diagnostics
25.	HbA1c Hemolyzing reagent cobas c111 համար	Լրակազմում 50.4 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 8x6,3 մլ, 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	A1CD2, 800T, cobas c 111 Hemolyzing Reagent Gen.2 (8 × 6.3 ml)	Roche Diagnostics
26.	Cleaner, basic 4 x 21 ml (NAOH-D) cobas c111 համար	Լրակազմում 4x21 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար: Ֆորմատ՝ 4x21, 15-25C ջերմային ռեժիմ ,գործարանային փաթեթավորումով տուփ	CLEAN, cobas c 111	Roche Diagnostics
27.	Deproteinizer 2x 11 ml cobas c111 համար	Լրակազմում 22 մլ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 2x11մլ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ISE Deproteinizer, cobas c 111	Roche Diagnostics
28.	Micro Cuvettes (1.680 pcs in box)	Լրակազմում 1680 կյուվետ նախատեսված Կոբաս C 111անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ֆորմատ՝ 1680 կյուվետ: Գործարանային փաթեթավորումով տուփ	Micro Cuvette Segment	Roche Diagnostics
29.	Printer paper cobas c111 համար	Նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար, Գործարանային փաթեթավորումով տուփ	Thermo-printer paper	Roche Diagnostics
31.	Նմուշի հավաք cobas c111 (ստեղների կոմպլեկտ)	Նախատեսված Կոբաս c111 անալիզատորի պահեստամաս	PROBE C111, SET OF 2	Roche Diagnostics
41.	D-Դիմեր 10 test Roche Cardiac	Լրակազմում 10 թեստ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝10 թեստ, ներառված է նաև կոդը, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche Cardiac D-Dimer 10 Tests (cobas)	Roche Diagnostics
42.	Տրոպոնին T 10 test Roche Cardiac	Լրակազմում 10 թեստ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝10 թեստ, ներառված է նաև կոդը, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche CARDIAC POC Troponin T	Roche Diagnostics
43.	Ստուգիչ Control Troponin-T	Լրակազմում 2մլ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝ 2x1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	RocheCARDIAC POC Troponin T Control (2 x 1 mL);	Roche Diagnostics
44.	Ստուգիչ Control D-Dimer	Լրակազմում 2մլ նախատեսված Կոբաս h232 անալիզատորի համար՝ ֆորմատ՝ 2x1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche CARDIAC D-Dimer Control (cobas)	Roche Diagnostics
45.	Roche Cardiac IQC 1 x low / 1 x high	Լրակազմում 2 թեստ-սթրիպ,Նախատեսված Կոբաս h232 անալիզատորի ֆոտոմետրի ստուգման համար, ֆորմատ՝1 x ցածր, 1 x բարձր, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche Cardiac IQC (cobas)	Roche Diagnostics
47.	Ռեագենտ UF II Pack Bac (2x2.1L)	Լրակազմում 2x2.1 լ քանակի,15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II PACK-BAC 2x2100ML	Sysmex
48.	Ռեագենտ UF II Pack Sed (2X2.1L)	Լրակազմում 2 x 2.1 լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF IIPACK-SED 2x2100ML	Sysmex
49.	Ռեագենտ UF II Search-Sed (29mlX2)	Լրակազմում 2 x 29 մլ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II SEARCH-SED 2x29ML	Sysmex
50.	Ռեագենտ UF II Search-Bac (25mlX2)	Լրակազմում 2 x 25 մլ քանակի,15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II SEARCH-BAC 2x25ML	Sysmex
51.	Ռեագենտ UF II Sheath 20L	Լրակազմում 20լ քանակի,15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II SHEATH 20L	Sysmex
52.	Ստուգիչ UF II երկու մակարդակի 47mlX1 H, 47mlX1 L	Լրակազմում 47մլ x 1H, 47մլ x 1 L քանակի,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II CONTROL 47mlX1 H, 47mlX1 L	Sysmex
53.	Կալիբրատոր UF II (2x47ml)	Լրակազմում 2x 47մլ քանակի, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է UF500 անալիզատորի շահագործումը ապահովելու համար	UF II CALIBRATOR 2x 47ML	Sysmex
54.	Combur- 10 UX Թեսթ	Combur-10-UX 100 Str. Urisys 1100 սարքի համար , 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, ֆորմատ՝ 100 սթրիպ տուփում, գործարանային փաթեթավորումով	Combur-10-UX 100 Str.	Roche Diagnostics
55.	Կոնտրոլ սթրիպ Ursys և Urielux-ի համար	N50, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	Control-Test M 50 strip	Roche Diagnostics
57.	Թրոմբոգլոտին 10 x 10 ml	Լրակազմում 10 x 10 մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ, Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	HROMBOCLOTIN 10 x 10 ML	Sysmex (Siemens)

58.	Թրոմբին 10 x 5 ml	Լրակազմում 10 x 5 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	THROMBIN 10 x 5 ML	Sysmex (Siemens)
59.	ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml	Լրակազմում 10 x 10 մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	ACTIN FS 10 x 10 ML	Sysmex (Siemens)
60.	Կալցի քլորի լուծույթ CaCl2 24x 15ml	Լրակազմում 24 x 15 մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Start 4 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	STA CACL2 0,025M	Diagnostica Stago
61.	Իննովին 10 x 10 ml	Լրակազմում 10 x 10 մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	INNOVIN 10 x10 ML	Sysmex (Siemens)
62.	Օռեն Կոլեր բուֆեր 24x15 ml	Լրակազմում 24 x 15 մլ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Start 4 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	STA OWREN KOLLER	Diagnostica Stago
63.	PTմուլտի կալիբրատոր 6 x 1 ml	Լրակազմում 6 x 1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	PT MULTICALIBRATOR 6 x 1 ML	Sysmex (Siemens)
64.	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml	Լրակազմում CiTrol1-E 10 x 1 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ,գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	CI-TROL 1 E 10 x 1 ML	Sysmex (Siemens)
65.	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml	Լրակազմում CiTrol2-E 10 x 1 մլ,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի շահագործումը ապահովելու համար:	CI-TROL 2 E 10 x 1ML	Sysmex (Siemens)
67.	Լվացող հեղուկ	CAClean I 1 x 50 մլ քանակի,2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CA-CLEAN I 50 ML	Sysmex
70.	Պրո-GRP 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	proGRP Elecsys cobas e 100	Roche Diagnostics
71.	HE4 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	HE4 Elecsys cobas e100	Roche Diagnostics
72.	Հակամյուլերային հորմոն 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	AMH Elecsys cobas e 100	Roche Diagnostics
73.	Սիֆիլիս 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Syphilis, 100 tests	Roche Diagnostics
74.	Թիրեոգլոբուլին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	TG G2 CS Elecsys	Roche Diagnostics
75.	Կալցիտոնին CS կալիբրատոր	Կալիբրատոր նախատեսված Կալցիտոնին ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	Calcitonin CalSet	Roche Diagnostics
76.	NSE-Նեյրոսպեցիֆիկ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:	NSE CS Elecsys, cobas e	Roche Diagnostics

Ապրանքները պետք է ունենան.

1. Եվրամիության և /կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5.Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:
***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ**
6. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Ք. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
1.	Գլյուկոզա 400 թեսթ	լրակազմ	20	18,000	360,000
2.	Ընդհանուր սպիտակուց 400թեսթ	լրակազմ	20	21,990	439,800
3.	Ալբումին 400 թեսթ	լրակազմ	20	19,800	396,000
4.	Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ	լրակազմ	24	33,200	796,800
5.	Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ	լրակազմ	24	16,500	396,000
6.	Միզանյութ 400 թեսթ	լրակազմ	24	21,450	514,800
7.	Միզաթթու 400 թեսթ	լրակազմ	10	49,500	495,000
8.	Կրեատինին 400 թեսթ	լրակազմ	24	22,000	528,000
9.	Տրանսամինազա ԱՍՏ 400 թեսթ	լրակազմ	24	20,900	501,600
10.	Տրանսամինազա ԱԼՏ 400 թեսթ	լրակազմ	24	20,350	488,400
11.	Ալֆա-Ամիլազա 200 թեսթ	լրակազմ	20	50,040	1,000,800
13.	Լակտատ-դեհիդրոգենազա 100 թեսթ	լրակազմ	20	23,100	462,000
14.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	լրակազմ	10	36,780	367,800
15.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-MB 100թեսթ	լրակազմ	4	42,340	169,360
16.	Խոլեսթերոլ 400 թեսթ	լրակազմ	24	29,700	712,800
17.	Տրիգլիցերիդներ 200 թեսթ	լրակազմ	24	18,000	432,000
18.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեսթ	լրակազմ	20	51,990	1,039,800
19.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 100 թեսթ	լրակազմ	20	49,500	990,000
20.	Գլյուկոզիդացված հեմոգլոբին 200 թեսթ	լրակազմ	14	135,390	1,895,460
21.	Երկաթ 100թեսթ	լրակազմ	10	16,500	165,000
23.	C -Ռեակտիվ սպիտակուց 200 թեսթ	լրակազմ	14	99,000	1,386,000
24.	NaCl Diluent 9%	լրակազմ	15	17,040	255,600
25.	HbA1c Hemolyzing reagent cobas c111 համար	լրակազմ	10	28,590	285,900
26.	Cleaner, basic 4 x 21 ml (NAOH-D) cobas c111 համար	լրակազմ	25	23,640	591,000
27.	Deproteinizer 2x 11 ml cobas c111 համար	լրակազմ	30	7,660	229,800
28.	Micro Cuvettes (1.680 pcs in box)	լրակազմ	15	58,000	870,000
29.	Printer paper cobas c111 համար	հատ	8	1,200	9,600
31.	Նմուշի հավաք cobas c111 (ասեղների կոմպլեկտ)	լրակազմ	4	153,000	612,000
41.	D-Դիմեր 10 test Roche Cardiac	լրակազմ	20	57,000	1,140,000
42.	Տրոպոնին T 10 test Roche Cardiac	լրակազմ	45	58,000	2,610,000
43.	Ստուգիչ Control Troponin-T	լրակազմ	7	39,790	278,530
44.	Ստուգիչ Control D-Dimer	լրակազմ	6	49,500	297,000
45.	Roche Cardiac IQC 1 x low / 1 x high	լրակազմ	3	36,660	109,980
47.	Ռեագենտ UF II Pack Bac (2x2.1L)	լրակազմ	8	135,000	1,080,000
48.	Ռեագենտ UF II Pack Sed (2X2.1L)	լրակազմ	8	139,050	1,112,400
49.	Ռեագենտ UF II Search-Sed (29mlX2)	լրակազմ	6	180,000	1,080,000
50.	Ռեագենտ UF II Search-Bac (25mlX2)	լրակազմ	5	202,500	1,012,500

51.	Ռեագենտ UF II Sheath 20L	լիտրաչափ	15	108,000	1,620,000
52.	Ստուգիչ UF II երկու մակարդակի 47mlX1 H, 47mlX1 L	լրակազմ	1	243,000	243,000
53.	Կալիբրատոր UF II (2x47ml)	լրակազմ	1	416,490	416,490
54.	Combur- 10 UX թեսթ	հատ	20000	200	4,000,000
55.	Կոնտրոլ սթրիպ Ursys և Urielux-ի համար	հատ	2000	420	840,000
57.	Թրոմբոգյոտին 10 x 10 ml	լրակազմ	1	76,500	76,500
58.	Թրոմբին 10 x 5 ml	լրակազմ	10	73,800	738,000
59.	ԱՊՏԺ ActinFS 10 x 10 ml	լրակազմ	10	131,400	1,314,000
60.	Կալցի քլորի լուծույթ CaCl2 24x 15ml	լրակազմ	10	36,990	369,900
61.	Ինոնվին 10 x 10 ml	լրակազմ	15	57,600	864,000
62.	Օռեն Կոլեր բուֆեր 24x15 ml	լրակազմ	20	42,000	840,000
63.	PT մուլտի կալիբրատոր 6 x 1 ml	լրակազմ	1	118,390	118,390
64.	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E 10 x 1ml	լրակազմ	25	31,990	799,750
65.	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E 10 x 1ml	լրակազմ	1	31,990	31,990
67.	Լվացող հեղուկ	հատ	20	20,700	414,000
70.	Պրո-GRP 100 թեսթ	լրակազմ	1	360,000	360,000
71.	HE4 100թեսթ	լրակազմ	1	285,000	285,000
72.	Հակամյուլերային հորմոն 100թեսթ	լրակազմ	1	600,000	600,000
73.	Սիֆիլիս 100 թեսթ	լրակազմ	12	187,000	2,244,000
74.	Թիրեոգլոբուլին CS	լրակազմ	1	26,790	26,790
75.	Կալցիտոնին CS կալիբրատոր	լրակազմ	1	271,990	271,990
76.	NSE-Նեյրոսպեցիֆիկ CS	լրակազմ	1	30,000	30,000
	Ընդամենը				**41,615,530**

Գնման ժամանակացույցը *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/21-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/
1.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Գլյուկոզա 400 թեսթ/	33691423/667	360,000
2.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ընդհանուր սպիտակուց 400թեսթ/	33691423/668	439,800
3.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ալբումին 400 թեսթ/	33691423/669	396,000
4.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Բիլիռուբին ընդհանուր 400 թեսթ/	33691423/670	796,800
5.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Բիլիռուբին ուղղակի 100 թեսթ/	33691423/671	396,000
6.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Միզանյութ 400 թեսթ/	33691423/672	514,800
7.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Միզաթթու 400 թեսթ/	33691423/673	495,000
8.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կրեատինին 400 թեսթ/	33691423/674	528,000
9.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրանսամինազա աստ 400 թեսթ/	33691423/675	501,600
10.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրանսամինազա ալտ 400 թեսթ/	33691423/676	488,400
11.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ալֆա-ամիլազա 200 թեսթ/	33691423/677	1,000,800
13.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Լակտատ-դեհիդրոգենազա 100 թեսթ/	33691423/679	462,000
14.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կրեատին ֆոսֆոկինազա ck-nak 200 թեսթ/	33691423/680	367,800
15.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կրեատին ֆոսֆոկինազա ck-mb 100թեսթ/	33691423/681	169,360
16.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Խոլեսթերոլ 400 թեսթ/	33691423/682	712,800
17.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրիգլիցերիդներ 200 թեսթ/	33691423/683	432,000
18.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Hdl - լիպոպրոտեիդներ (ալֆա) 200թեսթ/	33691423/684	1,039,800
19.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ldl - լիպոպրոտեիդներ (բետա) 100 թեսթ/	33691423/685	990,000
20.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Գլյուկոզիդացված հեմոգլոբին 200 թեսթ/	33691423/686	1,895,460
21.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Երկաթ 100թեսթ/	33691423/687	165,000
23.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/C -ռեակտիվ սպիտակուց 200 թեսթ/	33691423/689	1,386,000
24.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Nacl diluent 9%/	33691423/690	255,600
25.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Hba1c hemolyzing reagent cobas c111 համար/	33691423/691	285,900
26.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Cleaner, basic 4 x 21 ml (naoh-d) cobas c111 համար/	33691423/692	591,000
27.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Deproteinizer 2x 11 ml cobas c111 համար/	33691423/693	229,800
28.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Micro cuvettes (1.680 pcs in box)/	33691423/694	870,000
29.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)Printer paper cobas c111 համար/	33691162/663	9,600
31.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Նմուշի հավաք cobas c111 (ասեղների կոմպլեկտ)/	33691423/696	612,000
41.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/D-դիմեր 10 test roche cardiac/	33691423/698	1,140,000
42.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրոպոնին t 10 test roche cardiac/	33691423/699	2,610,000
43.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ control troponin-t/	33691423/700	278,530
44.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ control d-dimer/	33691423/701	297,000
45.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Roche cardiac iqc 1 x low / 1 x high/	33691423/702	109,980
47.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ռեագենտ uf ii pack bac (2x2.1l)/	33691423/704	1,080,000

48.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ռեագենտ uf ii pa... sed (2x2.1l)/	33691423/705	1,112,400
49.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ռեագենտ uf ii search-sed (29mlx2)/	33691423/706	1,080,000
50.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ռեագենտ uf ii search-bac (25mlx2)/	33691423/707	1,012,500
51.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ռեագենտ uf ii sheath 20l/	33691423/708	1,620,000
52.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ uf ii երկու մակարդակի 47mlx1 h, 47mlx1 l/	33691423/709	243,000
53.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր uf ii (2x47ml)/	33691423/710	416,490
54.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/ Combur- 10 UX Թեսթ/	33691162/664	4,000,000
55.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կոնտրոլ սթրիպ ursys և urielux-ի համար /	33691162/665	840,000
57.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Թրոմբոգլոտին 10 x 10 ml/	33691423/715	76,500
58.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Թրոմբին 10 x 5 ml/	33691423/711	738,000
59.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ապտժ actinfs 10 x 10 ml/	33691423/712	1,314,000
60.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալցի քլորի լուծույթ cacl2 24x 15ml/	33691423/713	369,900
61.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Իննովին 10 x 10 ml/	33691423/714	864,000
62.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Օռեն կոլեր բուֆեր 24x15 ml/	33691423/716	840,000
63.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Բեմուլտի կալիբրատոր 6 x 1 ml/	33691423/717	118,390
64.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ հեղուկ citrol1-e 10 x 1ml/	33691423/718	799,750
65.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ հեղուկ citrol2-e 10 x 1ml/	33691423/719	31,990
67.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Լվացող հեղուկ/	33691162/668	414,000
70.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրո-GRP 100 թեսթ/	33691423/876	360,000
71.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/HE4 100թեսթ/	33691423/877	285,000
72.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հակամյուլերային հորմոն 100թեսթ/	33691423/878	600,000
73.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Սիֆիլիս 100 թեսթ/	33691423/879	2,244,000
74.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Թիրեոգլոբուլին CS/	33691423/880	26,790
75.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալցիտոնին CS կալիբրատոր/	33691423/881	271,990
76.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/NSE-Նեյրոսպեցիֆիկ CS/	33691423/882	30,000
Ընդամենը			**41,615,530**

Վճարման ժամանակացույց *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/21-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/21-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն